

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՎՑՈՒՄ

Մ.Կ.Մարության

Խաչատոր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ,
մանկավարժական գիտությունների թեկնածու

Ն. Կ. Յովսեփյան

Խաչատոր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ կրթության ֆակուլտետի
«Օլիգոֆրենոմանկավարժություն» բաժնի 2-րդ կուրսի մագիստրանտ

Հանգուցայինքառերևարտահայտությունները. ներառական կրթություն, մտավոր զարգացման խանգարում, օրենք, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա, դպրոց:

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ներառման գործընթացը կրթական տարածությունում իրականացվում է, ինչպես նշված է հրապարակումներում, փորձնական կամ տարերային:

Տարիների ընթացքում երկրում հոգեբանա-ֆիզիկական շեղումներով երեխաներին կրթում և դաստիարակում էին հատուկ դասարաններում կամ գիշերօրիկ դպրոցներում (մինչև 1998թ.):

Այդ հաստատություններում նրանք յուրացնում էին հանրակրթական ծրագրերը, որոնք նախատեսված էին հանրակրթական դպրոցների համար, բայց ավելի երկարատև ժամանակում:

1990թ-ի սկզբի սոցիալ-քաղաքական վերափոխումները հանգեցրեցին քաղաքացիական քաղաքականության բազմաթիվ հարցերի վերահմատավորմանը, այդ թվում՝ երկրում հատուկ կրթության իրականացման խնդիրներին:

Այսօր հանրապետության կրթական ոլորտում տեղի են ունենում լուրջ փոփոխություններ: Փոխվում են մոտեցումները և վերաբերմունքը զարգացման շեղումներով երեխաների կրթության և ուսուցման նկատմամբ: Ներառական ուսուցման հիմնական պատվիրատումները ծնողներն են և հասարակական կազմակերպությունները:

Համապատասխան ՀՀ կառավարության 26.12.02 (№ 2179-ի) որոշման՝ Հայաստանում գործում են 8 ծեր ուսումնական հաստատություններ. տեսողական, լսողական, խոսքային, հենաշարժական ապարատի, ոչ բավարար մտավոր զարգացման շեղումներով, վատ վարքագծով և տաղանդավոր երեխաների համար:

Նմանատիպ կրթական մոդել գոյություն ունի ԱՄՆ-ում: Այնտեղ այդ բոլոր խմբերի երեխաները նիսվորվում են «handicapped children» «բացառիկ երեխա» հասկացությամբ: Հայաստանում հասուկ դպրոցները հիմնական կրթական հաստատություններն են, որտեղ մտավոր հետամնաց երեխաները կարող են ստանալ կրթություն: Բայց, հայ գիտնականները, հիմք ընդունելով արտասահմանյան երկրների և Ռուսաստանի փորձը, որոշեցին լուծել մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ինտեգրման հարցը, առաջարկեցին փոխել հասուկ կրթության կառուցվածքը: Ներկայումս կազմակերպվում է ինտեգրման մանկապարտեզներ, դպրոցներ և խմբեր՝ մտավոր հետամնացություն ունեցող երեխաների համար:

2002–2005թ-ին ավելացավ ինտեգրացված մանկապարտեզների և դպրոցների քանակը՝ 6;18-ով, համապատասխանաբար մեծացավ նաև ներառական ուսուցման մեջ ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների թիվը: Բայց, ինչպես նշում են մասնագետները, երկրում առկա է նաև տարերային ինտեգրացիոն գործնթաց նախադպրոցական հաստատություններում և դպրոցներում: Այդպիսի ինտեգրման պատճառը կայանում է հետևյալում. բավարար չէ զարգացմանարատներովերեխաների ախտորոշիչ աշխատանքը, ծնողները ձգտում են թաքցնել իրենց երեխայի խնդիրը, հասուկ կրթական հաստատությունները տանից հեռու են տեղակայված, և թե՛ ծնողները, և թե՛ երեխաները դեմ են հասուկ դպրոցներին: Հարկավոր է նշել, որ հանրակրթական հաստատությունների դաստիարակներն ու մանկավարժները դեռ բավարար պատրաստված չեն

Ներառական ուսուցման իրականացմանը, ստեղծված չեն պայմաններ տարբեր կրթական պահանջներով երեխաների ուսուցման համար: Հայաստանում ներառական ուսուցման կազմակերպման գործում մեծ դեր են խաղում միջազգային հասարակական կազմակերպությունները (օրինակ՝ «World Vision Armenia»), որոնց հիվանավորությամբ զարգանում է մանկապարտեզներում և դպրոցներում ներառական ուսուցումը:

Ներառական ուսուցման պայմաններում սահմանափակ հնարավորություններով երեխաների օգնության կազմակերպման գլխավոր դժվարությունները նախադպրոցական և դպրոցական ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերի և ուսումնադաստիարակչական գործընթացների անկատար լինելն է, ինչը պայմանավորված է այլ երկրների փորձի ոչ ստեղծագործական, օգտագործումով: Դրանից բացի համատեղ ուսուցման կազմակերպման համար կատարվում է շեշտադրում մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետ անհատական ուղղիչ պարապնունքների վրա:

Այսպիսով, երկրի կրթական համակարգում զարգանում են ինտեգրման գործընթացները, ինչի մասին վկայում են գործող նախադպրոցական և կրթական հաստատությունները, պատրաստ օգնություն ցուցաբերելու մտավոր հետամնացություն ունեցող երեխաներին և նրանց ծնողներին՝ ներդաշնակեցնելու երեխա - ծնող հարաբերությունները: Բայց գոյություն ունեն որոշակի դժվարություններ՝ կապված, առաջին հերթին, ընդհանուր և հասուկ կրթության փոխադրժակցության տվյալ տեսակետների նորմատիվային - իրավական և

գիտական մեթոդական ոչ բավարար մշակումների հետ:

Ներառական կրթությունը Ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում: Ներառումը բազմակողմ գործընթաց է: Այն արտացոլում է սոցիալական, իրավական տնտեսական, հոգեբանական և մանկավարժական հիմնախնդիրների համադրություն: Ներառումը դիտարկվում է որպես մեկը մյուսի հանդեպ ավելի հասկացող, հանդուրժող և դրականորեն տրամադրված մարդկանց հասարակության ձևավորման միջոցներից մեկը: Ներառական կրթությունը դիտարկվում է որպես ուղի և հնարավոր միջոց՝ մտավոր հետամնաց երեխաների հասարակության մեջ ներառելու և նրանց հարմարումը ապահովելու համար: Ուսուցման այս ձևը կոչված է իրականացնելու <<սովորեցնել համատեղ ապրելու>> սկզբունքը: Ժամանակակից պայմաններում մտավոր հետամնացություն ունեցող երեխաների կրթության հիմնական նպատակներից է երեխային ներառել ուսումնադաստիարակչական գործընթացի սոցիալական ուղղվածության մեջ: Յուրաքանչյուր երեխա իր անհատականությամբ անկրկնելի է: ՄԱԿ-ի ընդհանուր ժողովում ընդունված <<երեխաների իրավունքների համաձայնագրում>> (հոդված 23) նշված է, <<...մտավոր կամ ֆիզիկապես ոչ լիարժեք երեխան պետք է վարի լիարժեք և արժանավայել կյանք այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են նրա արժանապատվությունը, նպաստում են ինքնավատահություն ձևավորելուն և դյուրացնում են նրա ակտիվ մասնակցությունը ուսումնական և հասարական կյանքին>>:

Մտավոր հետամնացություն ունեցող երեխաները ուսումնական և սո-

ցիալական ներառման պայմաններում ունեն ինքնադրսնորման իրավունք: Իսկ դա ենթադրում է համակեցության, համագործակցության և գործընկերության հնարավորությունների ստեղծում ուսման, հանգստի և մասնագիտական ինքնադրսնորման ընթացքում: Հոգեֆիզիկական զարգացման թերություններով երեխաների ինքնադրսնորման հաջողությունը պայմանավորված է այն հանգանաքով, թե որքանով է հասարակությունը պատրաստ նրանց ընդունելու որպես լիարժեք անդամներ: Միաժամանակ անհրաժեշտ է ստեղծել նպաստավոր պայմաններ՝ նրանց մեջ ձևավորելու կենսական նշանակություն ունեցող կարողություններ և հմտություններ: Կենսականնորեն նշանակալից ուսումնադաստիարակչական, սոցիալ-մշակույթային հատկանիշների ձեռք բերման անհրաժեշտ պայման է՝ երեխայի անձի վաղ սոցիալացումն և ուսումնադաստիարակումը: Մտավոր հետամնացություն ունեցող երեխաներին ներառման և մասնագիտական օգնություն ցուցաբերելու կարևորագույն նախադրյալն է նրանց կարիքների և պահանջների բազմազանության, անհատակողնորոշիչ ուսուցման անհրաժեշտության ընդունումը: Դա կարևոր պայման է ներառման, շտկողական և վերականգնողական աշխատանքների ծավալման համար: Այստեղից առաջանում է հարմարեցված ուսումնական ծրագրերի ստեղծման, ինչպես նաև զարգացման անհատական ծրագրերի մշակման խնդիր՝ յուրաքանչյուր երեխայի հատուկ կարիքների և պահանջնունքների բացահայտման հաշվառմանը:

Ծովողագարգացնող մանկավարժական աշխատանքների հիմնական նպատակը մտավոր հետամնացու-

թյուն ունեցող Երեխաների ուսումնադաստիարակչական, սոցիալ-մշակութային աստիճանաբար զարգացումն է: Դրա լուծումն Ենթադրում է արժեքային համակարգի, վարքի կանոների փոխանցում Երեխաներին՝ նրանց հետաքրքրությունների ու պահանջմունքների սահմանաներուն, համապատասխան կարողությունների ու հմտությունների ձևերում, ինչպես նաև հասարակական կայնքի մեջ ընդգրկմանը և սոցիալական հարմարմանը խոչընդոտող թերությունների շտկում:

Ներառական կրթությունը դիտարկվում է որպես Երկկողմանի գործընթաց, որի մեջ ընդգրկվում է՝ մի կողմից սովորողի հարմարումը նրա համար նոր կրթական միջավայրում, մյուս կողմից դպրոցն իր բազմագործառությախն կառուցվածքով համարվում է <<առանձնահատուկ>> սովորողին: Դպրոցը ստանձնում է նոր խնդիր՝ ստեղծել պայմաններ սահմանափակ կարողություններով սովորողների կրթական պահանջմունքները բավարարելու համար: Խոկ դրա համար անհրաժեշտ է նախատեսել բազմակողմանի օգնություն և աջակցում(հոգեբանական, մանկավարժական, շտկողազարգացնող և այլն): Հարմարման նոր մեխանիզմների ձևավորումը դաշնում է դպրոցի համար նոր խնդիր: Խոսքն այդ բազմաբնույթ Երևույթի հանդեպ հոգեբանամանկավարժական և դիդակտիկական մոտեցումների դրսնորման մասին է: Հոգեբանական հարմարման տեսանկյունից անհրաժեշտ է կազմակերպել համապատասխան աշխատանքներ՝ ուղղված մտավոր հետամնացություն ունեցող սովորողին՝ աշակերտների, մանկավարժների, ծնողների կողմից ընդունմանը, ինչպես նաև նման Երեխաների համար

ստեղծել պայմաններ՝ մտնելու նոր միջավայր և ընդունելու տվյալ կրթական հաստատությունում գործող նորմերն ու կանոնները: Սանկավարժական տեսանկյունից հարկավոր է այնպես կազմակերպել ուսուցումը, կառուցել դասը, որ սովորողը կարողանա ընդգրկվել այդ գործընթացի մեջ՝ որպես սեփական գործունեության սուբյեկտ:

Ներառումը հնարավոր է իրականացնել մի քանի փուլերով: Տախնական փուլում՝ մինչ դասարանում մտավոր հետամնացություն ունեցող աշակերտ ունենալը, պետք է աշակերտների հետ նախապատրաստական աշխատանք տանել՝ մտավոր հետամնացությունունեցող Երեխաներին ընդունելու ուղղությամբ: Այդ ընթացքում անցկացվում են այնպիսի խաղեր, որոնք խաղի մասնակիցներից պահանջում են համաձայնեցված գործողություններ, միասնական որոշումների կայացում, փոխօգնություն: Խաղի ժամանակ ստեղծվում են այնպիսի իրավիճակներ, որոնք ենթարում են ապրումնակցման, միջյանց կարեկցելու, օգնելու ցանկության դրսնորումներ:

Այսպիսով՝ դպրոցում մինչ համատեղ ուսուցումը միջնորդավորված ձևով ստեղծվում է հոգեբանական նախադրյալներ՝ մտավոր հետամնացություն ունեցող Երեխային դպրոցի միջավայր ընդգրկելու համար: Այս բնագավառում պետք չէ սահմանափակվել մեկ- Երկու միջոցառումներով: Ուսուցիչը դասարանին նկատել է տալիս, որ մտավոր հետամնացություն ունեցող աշակերտին ընդունում է, ինչպես մյուսներին, գնահատում է նրան: Այդ կերպ սովորողները հնարավորություն են ունենում ընդգրկվելու ու պաշտոնական միջանձնային հա-

րաբերությունների մեջ: Աստիճանաբար, մանկավարժի հմուտ դեկավարությամբ դասարանում ծևավորվում են դրական հարաբերություններ:

Ներառական կրթության վերաբերյալ ուսումնասիրությունները հիմք են տալիս ենթադրելու, որ համատեղ ուսուցման ընթացքը դրականորեն է ազդում սովորողների փոխհարաբերությունների վրա: Ըստ կատարած հարցումների՝ մտավոր հետամնաց երեխանների կեսը համադասարանցիների հետ հարաբերությունները գնահատում է <<լավ>>; Նրանց մեծ մասը վկայում է, որ ընկերություն է անում նաև այլ դասարանցիների հետ: Մանկավարժների հավաստմամբ՝ համադասարանցիները պատրաստ են և օգնում են նման երեխաններին: Ծնողներն էլ կարևորում են այն փաստը, որ երեխանների միջև չկան կոնֆլիկտներ:

Դպրոցում ներառման գործընթացի հաջորդ փուլի խնդիրն է՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների ներգրավումն ուսումնական գործունեության մեջ: Ուսուցչի ջանքերը ուղղված են լինելու նրանց մեջ ձևավորելու այնպիսի ուսումնական կարողություններ, որոնց շնորհիկ կարողանան յուրացնել ուսումնական ծրագիրը և ուսումնական գործողությունների համակարգը: Աստիճանաբար հարմարվելով ուսումնական գործընթացին՝ երեխան դառնում է ավելի վստահ, նվազում է նրա տագնապի մակարդակը, հաղթահարվում է վախը դպրոցի նկատմամբ: Նա սկսում է ցուցաբերել ակտիվություն՝ ըստ իր հնարավորությունների:

Մտավոր հետամնացություն ունեցող երեխանների ուսումնական հաջողությունները բարձր չեն՝ պայմանավորված նրանց իմացական կա-

րողությունների յուրահատկություններով: Շփկելիս նրանք ավելի քիչ են խոսում իրենց ուսումնական հաջողությունների մասին: Ավելի հաճույքով մասնակցում են այն առարկաներին, որոնք ավելի հեշտ են յուրացնում՝ տեխնոլոգիա, ֆիզկուլտուրա, կերպարվեստ:

Դժվար ընկալելի են վերացական մտածողություն պահանջող առարկաները: Մտավոր հետամնացություն ունեցող երեխանները գնահատում են իրենց նկատմամբ լավ վերաբերմունքի դրսևորումները և այդ չափանիշներով էլ գնահատում են դարոցը: Նման սովորողների ներառմանը պահանջում է առավել տևական և հետևողական աշխատանք:

Ուսուցման 1-ին, 2-րդ տարիններին հատուկ ուշադրություն է դարձվում հիգիենիկ ունակությունների ձևավորմանը և ինքնասպասարկման ուսուցմանը: Ուսուցման 3-րդ, 4-րդ տարիններին առավել մեծ նշանակություն է ստանում կենցաղային, ձեռքի և բացօքյա աշխատանքը: Աշխատանքային դաստիարակության հատուկ պարապունքներն իրացվում են նաև առօրյա կյանքում: Նրա մեթոդներն են՝

1. Գործողությունների մասնաւում ցուցադրում

2. Խամատեղ գործողություն

3. Ինքնուրույն գործողություն

4. Բացատրություն

5. Նմուշի վերլուծություն

6. Գործողության նախնական պլանավորում

7. Աշխատանքի արդյունքի գնահատում

Անհատական և խմբային պարապմունքների ժամանակ կարևոր է ԲՄԹ-ի ճիշտ և մատչելի խոսքը: Խրախուսվում է երեխայի խոսքային հաղոր-

դակցումը միմյանց հետ: Ուսուցիչը սովորողին ներգրավում է ուսումնական գործունեության մեջ, անձնավորում նրա աշխատանքի արդյունքը: Խրախուսելով ամենափոքր արդյունքը («Այս բառերը դու ճիշտ ես գրել») լրիջպում է նաև ուսումնական գործունեության հանդեպ դրդապատճառի ձևավորման խնդիրը: Ուշադրությունը չի կենտրոնացվում սովորողի անհաջողության վրա: Դասարանի առջև պահպանվում է սովորողի կարգավիճակը. <<Դեռ ամբողջը չես արել, դեռևս կարող ես ինքնուրույն աշխատել: Մենք քեզ կօգնենք և համոզված ենք, որ շուտով դու ինքնուրույն կանես ավելին>>: Տվյալ իրավիճակում ուսուցիչն ստեղծում է ուսումնական գործունեության իրականացման համար պայմաններ, նպատակամղում սովորողի գործունեությունը

Ուսման 1-ին տարի - ուսուցումը սկսվում է ինքնասպասարկման հմտությունների տարրի ձևավորումից /հագնվել, լվացվել/: Մրանց շնորհիվ երեխան գիտակցում է, որ կան ամենօրյա պարտականություններ, դժվարություններ՝ կապված իր պահանջնունքի հետ: Մտավոր հետանացություն ունեցող երեխանների մեջ նույնիսկ ամենատարրական ինքնասպասարկման հմտությունները հեշտությամբ չեն ձևավորվում: Ուսուցիչը նրանց սովորեցնում է ամեն մի հմտության համար անհրաժեշտ գործողությունները. Օրինակ՝ իմանա, որ ուտելուց առաջ պետք է լվացվի: Կուլտուր-հիգենիկ ունակություններից այս տարիքում երեխային պետք է սովորեցնել ճիշտ դրսուրել սնվելու պրոցեսում: Այս տարիքում երեխայի մեջ պետք է ձևավորվեն նաև հագնվելու հանվելու հմտությունները: Մրանք

նույնպես յուրացվում են փուլ առ փուլ: Կարելի է օգտագործել տիկնիկին հացնել - հանելը: Առավել արդյունավետ է սեփական շորը հագնել, հանելը: Գործընթացը առավել հետաքրքիր դարձնելու համար օգտագործվում են հատուկ խաղեր՝ դիդակտիկ խաղեր և խաղալիքներ: Երեխայի ցանկացած առաջարիմություն պետք է մատնամշել և գովել:

Ուսուցման 2-րդ տարի- 2-րդ տարվա առաջին կեսը տրամադրվում է ինքնասպասարկման հմտությունների տիրապետմանը: Երեխան սովորում է կապել կոշիկի կապիչները, արձակել, կոճկել կոճակը: Մրանք սովորեցնելու համար գործողությունը նախ ցուցադրվում է փուլ առ փուլ, նկարագրվում է համատեղ, ապա ինքնուրույն: Յուրացման որակը լավացնելու համար կարևոր է գործողությունը միշտ կատարել միևնույն հաջորդականությամբ: 2-րդ տարվա 2-րդ կեսից անցկացվում են ձեռքի աշխատանքներ, որոնք ունեն շտկողական նշանակություն /մտածողության զարգացում, տեսաշարժողական համաշափություն, կատարելագործում, մանր շարժումների զարգացում և այլն: Մինչև ձեռքի բուն աշխատանքին անցնելը ուսուցիչը ցույց է տալիս այն, որը պիտի պատրաստեն: Ձեռքի աշխատանքը սկսում են թղթից: Երեխային սովորեցնում ենք, որ թուղթը կարելի է ծալել, մկրատով կտրել, տրորել: Յետզիետե ձեռքի աշխատանքը կատարվում է նաև այլ բնական նյութերով՝ տերևներ, թելեր, պտուղներ, չորացած ծաղիկներ և այլն: Կարևոր է որ ողջ ձեռքի աշխատանքի ընթացքում երեխայի մեջ չնարի այն պատրաստելու ցանկությունը: Ակսած 2-րդ տարուց երեխային տրվում են տար-

րական աշխատանքային, կենցաղային հմտություններ՝ սրբել փոշին, ջրել ծաղիկները:

Ուսուցման 3-րդ տարի – Բարդացվում են ինքնասպասարկման աշխատանքները, երեխան սովորում է հարդարել անկողինը, սանրվել, օգտվել թաշկինակից: Ստցվում է ամենօրյա հերթապահություն: Զեռքի աշխատանքի ժամանակ յուրացվում են տարբեր նյութերի ու գործիքների/մուլր, վրձին/ հատկությունը: Երեխան սովորում է պատրաստել պարզ խաղալիքներ, մի առարկայից պատրաստել մեկ ուրիշը: Օրինակ՝ արկղից պատրաստել սայլակ: Կարևոր է, որ աշխատանքի շնորհիվ երեխան ձեռք բերի վստահություն իր հնարավորությունների նկատմամբ:

Ուսուցման 4-րդ տարի - Ծարունակվում է ինքնասպասարկման հմտությունների ամրապնդումը: Երեխան յուրացնում է գործողությունների կատարման ռացիոնալ ձևը: Երեխանները սովորում են աշխատանքում օգնել իրար, լինել ուշադիր միմյանց նկատմամբ: Այդ տարում սկսում է իրացվել բացօթյա աշխատանքը, որը նպաստում է երեխայի հոգեկան, ճանաչողական գործունեության զարգացմանը, ամրապնդում է առողջությունը, դաստիարակում սեր բնության նկատմամբ, հարստացնում է երեխայի գիտելիքները բնության, տարվա և եղանակների, բույսերի ու կենդանիների վերաբերյալ: Զեռքի աշխատանքը այս տարում իրացվում է ավելի բարդ նյութերով ու գործիքներով: Օրինակ՝ պլաստմասա, փայտ, սղոց, մուլր: Ծարունակվում է աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունքի առաջցումն ու պահպանումը: Ընդ որում երեխան

ակտիվորեն ներգրավվում է աշխատանքային պրոցեսի մեջ, նա կատարում է կենցաղային աշխատանք. Օրինակ՝ սենյակի մաքրում, գրքերի սոսնձում և համագործակցում մեծի հետ: Ուսուցման բոլոր 4 տարիների ընթացքում երեխան ծանոթանում է տարբեր մասնագիտությունների: Դա իրականացվում է էքսկուլսիաների, խաղերի, նկարների, ֆիլմերի դիտման միջոցով: Երեխայի աշխատանքը ուսուցիչը կազմակերպելիս պետք է անպայման հաշվի առնի նրա անհատական հնարավորությունները, հոգեկան առանձնահատկությունները: Չի կարելի այս երեխային մեղադրել դանդաղկոտության կամ արագաշարժության համար:

Այդպիսի սովորողի՝ դպրոցում լինելու հաջողությունն առաջին հերթին պայմանավորված է ոչ միայն ուսուցչի, այլև դպրոցի ամբողջ մանկավարժական կոլեկտիվի կողմից հմուտ կազմակերպված աշխատանքով, նրանց կողմից ցուցաբերվող օգնությամբ և օժանդակությամբ: Այսպիսվով՝ հաստատում է, որ ներառական ուսուցման պայմաններում մտավոր հետամնացություն ունեցող սովորողի հարմարման մեխանիզմների ձևավորման համար գոյություն ունեն ներքին հնարավորություններ: Կրթական ներառման պայմաններում սովորողները լսում և հասկանում են միմյանց: Հավասարության և փոխագործունեության բացակայության դեպքում ներառումը կրում է ձևական բնույթը: Այսինքն՝ աշակերտները կարող են համատեղ սովորել, սակայն ներառված չլինել: Իրական ներառումը ենթադրում է սովորողների շփումներ, փոխագործունեություն, փորձի փոխանակում և համագործակցություն:

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ В ПРОЦЕССЕ ОБЩЕГО РАЗВИТИЯ ДЕТЕЙ С НАРУШЕНИЕМ УМСТВЕННОГО РАЗВИТИЯ

М. К. Марутян

доцент кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абояна,
кандидат педагогических наук

магистрант 2-ого курса факультета специального образования отделения
олигофренопедагогики Армянского государственного педагогического
университета имени Хачатура Абояна

Н. К. Овсепян

В статье рассматриваются основные направления и пути организации инклюзивного образования. Уделяется большое внимание по-вышению общего развития детей имеющих умственную отсталость в контексте инклюзивного образования.

M. K. Marutyan

associate professor at the Chair of Special Pedagogy and Psychology,
Khachatur Abovyan Armenian State Pedagogical University,
Candidate of Pedagogical Sciences

N. K. Hovsepyan

master degree student at the Chair of Special Pedagogy and Psychology,
Khachatur Abovyan Armenian State Pedagogical University